

ՅԱԻՏԵՆԱԿԱՆ ՀԱՆԳԻՍ ԲԱԶՄԱՎԱՍՏԱԿ ՀՈԳԵՒՈՐԱԿԱՆ

ԱՐԺ. Տ. ՎԱՐՂԱՆ ԱԽԱԳ ՔՇՆՅ. ՏԻԼԿԵՐԵԱՆԻ
1911–2009

ՎԵՐՋԻՆ ՕԾՈՒՄ ԵՒ ԹԱՂՈՒՄ

Այսու հոգեկան անհուն վշտով կը հաղորդենք Թեմիս Հոգեւոր Հովիւներուն, Ծխական Խորհուրդներուն, Տիկնանց Միութեան Մասնաճիւղերուն, Թեմական Պատգամաւորներուն, յարակից բոլոր կազմակերպութիւններուն եւ մեր համայն հաւատացեալ ժողովուրդին, թէ կարճատեւ հիւանդութենէ ետք Շաբաթ, Մայիս 2ին, 2009 ի Տէր Հանգեաւ Արեւմտեան Թեմէն ներս երկարամեայ նուիրեալ ծառայութիւն ունեցող եւ հանգստեան կոչուած բազմավաստակ հոգեւորական եւ գրող՝ Արժ. Տ. Վարդան Աւագ Քինյ. Տիւկէրեան:

Թեմակալ Առաջնորդ՝ Գերշ. Տ. Յովնան Արք. Տէրպէրեանի գլխաւորութեամբ հանգուցեալ Տէր Հօր «Լուսցման եւ զգեստաւորման» արարողութիւնը կատարուեցաւ Կլէնփրէյլի Սուրբ Պետրոս Հայց. Եկեղեցւոյ մէջ՝ Ջորեքշաբթի, Մայիս 6ի երեկոյեան ժամը 4:00ին, իսկ Տան Կարգը՝ ժամը 5:00–ին:

Տան Կարգէն ետք սկսաւ Սուրբ Պատարագը: Թեմակալ Առաջնորդ Գերշ. Տ. Յովնան Արք. Տէրպէրեան մատոյց Սուրբ Պատարագը՝ որպէս առնթերակայ ունենալով Տ. Սուշեղ Աւագ Քինյ. Թաշճեանը եւ Տ. Վապգէն Քինյ. Սովսեսեանը: Ողջոյնէն առաջ սկսաւ Վերջին Օծման Կարգը: Ընթերցումներու եւ շարականներու երգեցողութենէն ետք, Առաջնորդ Սրբապան Հայրը Սրբալոյս Միւռնով Օծեց Հոգեւոյս Տ. Վարդան Աւագ Քինյ. Տիւկէրեանին ճակարկն ու աջ ձեռքը:

Առաջնորդ Սրբապան Հայրը խօսեցաւ յուկումնալից եւ հոգեկան մխիթարութիւն պատճառող դամբանակը:

«Ողջոյն քե՛կ Սուրբ Եկեղեցի. Ողջոյն քե՛կ սեղան սրբութեան: Ողջոյն ձե՛կ դասք քահանայութեան. ես ճանապարհորդեցի առ արարիչն իմ»:

«Ողջոյն ձե՛կ մանկունք եկեղեցւոյ: Ողջոյն ձե՛կ հաւատացեալ եղբարք իմ ի Քրիստոս: Ողջոյն ձե՛կ համօրէն ժողովրդականք. ես ճանապարհորդեցի առ Քրիստոս յոյսն ամենեցուն»

«Ահա հրաժարիմ ի քէն Սուրբ Եկեղեցի: Ահա մեկնիմ ի ձէնջ սիրելի եղբարք. ի կոչումն վերանորոգողին Քրիստոսի Աստուծոյ մերոյ»:

«Աղօթս արարէք վասն իմ հարք իմ, եղբարք եւ որդիք. եւ օրհնեցէ զձե՛կ Քրիստոս Փրկիչ մեր. պահեցէ հաստատուն ի հաւատս իւր մինչեւ ի սահմանեալ կէտ կոչմանս այսորիկ. եւ խաղաղութիւն Տեառն եղիցի ընդ ձե՛կ յաւիտեանս յաւիտենից. ամէն»:

Մեր երանելի հայրապետներու աղօթքն է այս, որ այսօր անգամ մը եւս լսելի կը դառնայ բոլորիս, այս անգամ Հոգեւոյս Տ. Վարդան Աւագ Քահանայի անշնչացած էութեան ընդմէջէն, որպէս վերջին աղօթքի շունչ ու ձայն, որպէս սիրոյ պատգամ ու հաւատքի հրաւիրող մեղեդի:

«Ողջոյն քե՛կ Սուրբ Եկեղեցի...»

Հարիւրամեայ ու ծերունապարդ Տէր Վարդան Աւագ Քահանայ Տիւկէրեան, որ ողջոյնը կը յղէ բոլորիս. իր շար սիրելի եկեղեցւոյ, Սուրբ Սեղանին, որուն առջեւ ծնրադիր անթիւ Սուրբ Պատարագներ մատուցեց, քահանայից դասին՝ եկեղեցւոյ սպասաւորներուն, բոլորիս մէջ մնալով թէեւ փարիքով աւագերէցը, բայց մտքով ու հոգիով եռանդուն ու արդիւնաշար քահանան: Իր ողջոյնի խօսքին մէջ հաստատարակամ կը յայտարարէ. «Ես ճանապարհորդեցից առ արարիչն իմ»:

Տասնամեակներ շարունակ իր հաւաքացած Աստուծոյ սէրը բաշխեց իր հա-
վարաւոր ժողովուրդին՝ իր գրչէն բխած գունագեղ խօսքերով ու պարզամտերով,
որոնց մէջ ընդգծուած համոզումը առկայ մնաց միշտ այն մասին, որ մարդուն կեանքը
ընթացք մըն էր դէպի Արարիչն Աստուած:

«Ողջո՞յն ձեզ մանկունք եկեղեցւոյ...»:

Այս Սուրբ Եկեղեցւոյ պատերէն ներս դեռ շար երկար պիտի լսուին Տէր Վար-
դանին խրոխտ պարզամտերը, որոնք հրաւեր են ուղղուած բոլորիս անխտիր, որպէս
եկեղեցւոյ վաւակներ, հաւաքացեալներ ի Քրիստոս, որպէսպի Քրիստոս դարձնենք
յոյսը մեր կեանքին: Արդարեւ, Քրիստոս դարձաւ իր կեանքը մշտապէս լուսավարող
ներկայութիւնը, Անոր սէրը սեփականացուց, Անոր իմաստութիւնը՝ իր գրիչը դարձուց
ծաղկեալ, Անոր իմաստութեամբ լեցուց իր կեանքը:

«Ահա հրաժարիմ ի քէն Սուրբ Եկեղեցի...»:

Բոլորիս սիրելի Տէր Վարդան քաջ գիտակցեցաւ, որ կեանքի օրինաչափու-
թիւնը, Աստուծոյ նախախնամութիւնը չէր կրնար վինք առանձնացնել սովորական
մահկանացուներէն եւ ո՛չ ալ վինք դասել առանձնաշնորհեալներու շարքին, կեանքն
ալ աւելի երկարելու փեսակէտէն: Ինք գրաւ սակայն, գաղտնիքը իր կեանքին հետքը
արձանագրելու բոլորիս սրտերուն մէջ, գալիք ժամանակներուն մէջ դրոշմելով իր
անունը՝ որպէս վաստակաշատ մշակ, ուսուցիչ, քահանայ, վարդապետ իր բեղուն
գրիչով եւ սրեղծագործ կեանքով:

«Աղօթք արարէք վասն իմ հարք իմ, եղբարք եւ որդիք...»:

Երկինքէն մեզի հասնող Տէր Վարդանի աղօթքի խնդրանքը կը լսենք սա պա-
հուն. «Աղօթեցէք ինձի համար, հայրեր եւ մայրեր, եղբայրներ եւ քոյրեր եւ որդի-
ներ...եւ թող Քրիստոս օրհնէ ձեզ, հաստատուն պահէ ձեզ հաւաքքի կեանքի մէջ եւ
թող Տիրոջ խաղաղութիւնը ձեզի հետ ըլլայ մինչեւ յաւիտեան»:

Սիրեցեալ հոգեւոր եղբայրներ եւ սիրելի բարեպաշտ հաւաքացեալներ: Տէր
Վարդան բովանդակ կեանքը ապրեցաւ սրեղծագործելով: Հարիւրաւոր իր քարոզ-
ները, որոնք հապորներով ի յոյս հրապարակուեցան, իրենց մէջ կը խրացնեն իր
հաւաքամբը, կեանքը որոշակիօրէն ապրելու իր ոճն ու գիտակցութիւնը, Աստուծոյ
հանդէպ իր երկիւղածութիւնը, Սուրբ Էջմիածնի հանդէպ իր բացարձակ նուիրումը, որ
առաւել ամրապնդուեցաւ իր մէջ Երջանկայիշատակ Տ. Տ. Վազգէն Ա. Ամենայն Հայոց
Կաթողիկոսի հետ իր ունեցած հանդիպումներու պարճառով, վերջապէս իր խօսքը
մարդկութեան կեանքի բոլոր երեւոյթներու մասին, ըլլան անոնք բարոյական սկզ-
բունքներն ու ժխտական բարքերը: Ան մնաց հայ մամուլին ամենահարապատ բարե-
կամը Լոս Անճելըսէն մինչեւ Եգիպտոս, աշխարհի չորս ծագերուն հրապարակուող
թերթերուն հասցնելով իր հոգեցունց պարզամտերը, պարմուածքներն ու հրապարա-
կախօսութիւնները:

Լուռ է այս պահուն Տէր Վարդան: Իր փառապետ մարմինը հանգչած է ու
աղօթք դարձած հաւաքացեալներուն այս ընթանիքը կը սուսուի իր հոգիին խորքը
անգամ մը եւս ըմբռնելու համար կեանքին իմաստը, մահուան խորհուրդը եւ հորիվո-
նէն անդին մեզ սպասող կեանքը:

Լռութեան մէջ, սակայն, դեռ կը լսենք իր խրոխտ ձայնը, Աստուծոյ կանչին
անսացող հոգեւորականի աղօթքը, անհաւար հոգիներուն հրաւեր կարդացող դէպի
տուն վերադարձի պարզամտ, հայրենասէր ու եկեղեցասէր հայ հոգեւորականին քաղ-
ցրահունչ շարականին երգը: Մեզի համար, անխտիր, Տէր Վարդան Աւագ Քինյ. Տիւ-
կերեանի շուրջ հարիւրամեայ վաստակը՝ հրաւեր է հոգեւոր արթնութեան, մնալու
հաստատական մեր հաւաքքի ու ծառայութեան ճանապարհին, որպէսպի Աստուածա-
տուր մեր կեանքը արժեւորենք սրեղծագործ կեանքով, նոյն կեանքը դարձնելով
պսակը մեր Սուրբ Եկեղեցւոյ եւ գեղեցիկ ընծայում Աստուծոյ Սուրբ Սեղանին:

Այսօր մեր ցաւակցութիւնները կը յղենք Արեւմտեան Թեմի եկեղեցականաց ողջ
դասին, հաւաքացեալներուն եւ մասնաւորաբար Տէր Հօր պարագաներուն՝ Տէր եւ

Տիկին Ճորճ եւ Սոնիկ Քէշիշեանին եւ բոլոր բարեկամներուն: Սակայն, Կոստան օր չէ այս, այլ հարիւրամեայ կեանքի մը փոնախմբութիւնը, որուն համար հազար փառք կը վերառաքենք Աստուծոյ:

Թող երկնային լոյսերու մէջ բնակի Հոգելոյս Տ. Վարդան Աւագ Քահանայի հոգին: Երկնային օթեւաններէն իր հայեացքը երբ կեդրոնացնէ մեր վրայ, պիտի ուրախանայ անոր հոգին, որովհետեւ իր երայր՝ Հայոց Պատարագին ընծայումը ամենուրեք՝ ի Հայաստան եւ ի սփիւռս աշխարհի, խունկ ու աղօթք պիտի դառնայ իր հոգիին համար: Զարկական շունչով օծուն մեր հոգին, որուն ակդեցութիւնը կը մեղմացնէ մեր մէջ երկմտութիւնն ու մահուան վախը, քանզի քաջ կը գիտակցինք Քրիստոսի Յարութիւնը դարձաւ մարդկութեան կեանքը դէպի յարութիւն առաջնորդող հոգեւոր լոյսութիւնը:

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսին Առաջնորդ Սրբազան Հօր յրկած հետեւեալ ցաւակցագիրը կարդաց Հոգշ. Տ. Պարեպ Ծ. Վրդ. Երէցեան:

Գերաշնորհ

Տ. Յովնան Արքեպիսկոպոս Տէրպէրեան

ԱՄՆ Հայոց Արեւմտեան Թեմի Առաջնորդ

Պըրպէնք, Գալիֆորնիա

Սիրելի Սրբազան,

Ցաւով տեղեկացանք Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու նուիրեալ եւ բազմավաստակ հոգեւորական՝ Արժանապատիւ Տ. Վարդան Աւագ Քահանայ Տիւրքիստանի մահուան մասին:

Յանուն Գերագոյն Հոգեւոր Խորհրդի եւ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբանութեան՝ բերում ենք Մեր ցաւակցութիւնը Ձեզ, Տիրախնամ Թեմի հոգեւոր դասին, Արժանապատիւ Տէր Հօր հարապատենին եւ նրա կորուստը սգացող բոլոր անձանց:

Հոգելոյս Տէր Հայրը, որ վերապրել էր Հայոց Ցեղասպանութիւնը, բարեպաշտ իր կեանքը բոլորանուէր ծառայութեամբ ընծայեց Առաքելական մեր Սուրբ Եկեղեցուն եւ հաւատարմոր ժողովրդին երկարամեայ ուսուցչագործութեամբ: Լուսահոգին նախանձախնդիր ոգով երկար տարիներ գովարժան ջանքեր ներդրեց Ամերիկայի Միացեալ Նահանգաց Հայոց Արեւմտեան Թեմի հայ համայնքի հոգեւոր կեանքի առաջընթացին ի խնդիր՝ լինելով Հոգեւոր Հովիւր Իսթ Լոս Անճելըսի Սուրբ Սարգիս Եկեղեցու:

Հանգուցեալ Տէր Հօր գործունէութիւնը բարեպարոյ է նաեւ գրական բեղուն վաստակով: Նրա հեղինակած գրքերուն եւ սրբեղծագործութիւններուն Քրիստոսասէր իր հոգին է խօսում ընթերցողների հետ, յորդորում առաւել սիրոյ եւ հաւատարմութեան՝ առ ազգն ու Հայրենին:

Երջանկայիշտարակ Վազգէն Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոսը, բարձր գնահատելով Տէր Վարդանի գրական ձեռքբերումները, Հայրապետական Սրբատառ Կոնդակով նրան շնորհել է Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու Սուրբ Սահակ եւ Սուրբ Մեսրոպ պատուոյ բարձր շքանշանը, իսկ եկեղեցական արգասաւոր ծառայութեան համար՝ Աւագ Քահանայութեան պատիւ: Մենք եւս ամիսներ առաջ Հայրապետական Օրհնութեան Գիրով Մեր բարձր գնահատանքը բերեցինք Արժանապատիւ Տէր Վարդան Աւագ Քահանայ Տիւրքիստանին՝ ազգային մեր անդաստանում արդիւնաշատ ծառայութեան եւ ձեռքբերումների համար:

Վշտակիր սրտով աղօթում ենք առ Ամենագութն Աստուած, որ երկնային լուսեղէն հարկերում խաղաղութեան մէջ ընդունի հոգին նորոգ հանգուցեալ հաւատարիմ իր սպասաւորի եւ Սուրբ Հոգու մխիթարութեան բիւր շնորհներով սփոփի բարե-

յիշարակ Տէր Հօր բոլոր հարապարներին, մեր Սուրբ Եկեղեցու հոգեւոր դասին եւ հաւաքաւոր Մեր պաւակներին:

«Յիշեցդ Տէր զհոգի ծառային Իւրոյ եւ հանգուցէ զնա ի լոյս երեսաց աստուածութեան Իւրոյ»:

Վշտակից աղօթակցութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ.

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ապա Հայր Սուրբը կարդաց Հայց. Եկեղեցւոյ Արեւելեան Թեմի Առաջնորդ՝
Գերշ. Տ. Խաժակ Արք. Պարսամեանին ղրկած հետեւեալ ցաւակցագիրը:

Սիրելի Սրբապան Եղբայր,

Սրտի անհուն կսկիծով տեղեկացանք Արժ. Տ. Վարդան Աւագ Քհնյ. Տիւլկերեանի վախճանման գոյժը:

Տէր Վարդան Հայց. Եկեղեցւոյ այն վաստակաշատ ու բացառիկ հոգեւորականներէն էր, որ իր ամբողջ կեանքի ընթացքին ուխտագրուած մնաց Աստուծոյ ծառայութեան եւ բանիւ ու մանաւանդ գրիչով լուսաւորեց իր ունկնդիրներուն եւ ընթերցողներուն միտքերն ու հոգիները: Տէր Հայրը որպէս գրագէտ եւ գիրքերու ու բազմաթիւ յօդուածներու հեղինակ, ամբողջ Ամերիկայի եւ արտասահմանեան հայաշատ կեդրոններու իր ազգակիցներուն կողմէ փնտրուած գրիչ մըն էր, որ մինչեւ իր կեանքի վերջին վայրկեանը ջանաց իր մտածումներն ու դաստիարակիչ գաղափարները յանձնել թուղթին:

Ամերիկայի Արեւելեան Թեմի հոգեւորականաց դասուն եւ բոլոր հաւատացեալներուն անունով խորին ցաւակցութիւն կը յայտնենք Արժ. Տ. Վարդան Աւագ Քհնյ. Տիւլկերեանի վախճանման առիթով:

Կ'աղօթենք առ Աստուած որպէսպի Իր երկնային լոյսերուն մէջ հանգչեցնէ Տէր Վարդանի յոգնաբեկ հոգին:

Հոգշ. Տ. Պարթեւ Վրդ. Կիւլիւմեան կարդաց Գերշ. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեանի սրտաբուխ ցաւակցագիրն ու հոգեւոր պատգամը:

Եկեղեցւոյ Հոգեւոր Հովիւը՝ Արժ. Տ. Վազգէն Քհնյ. Սովսէսեան անդրադարձաւ Սուրբ Պետրոս Հայց. Եկեղեցիէն ներս Հոգելոյս Տէր Վարդանի արարողութեան մասնակցութեան, քարոզներուն եւ հոգեւոր պատգամներուն, ինչպէս նաեւ իր ունեցած մարդկային առաքինութիւններու մասին: Իր երախտագիտութիւնը յայտնեց Սրբապան Հօր, որ Տան Կարգն ու Վերջին Օծումը կատարուեցաւ Սուրբ Պետրոս Հայց. Եկեղեցւոյ մէջ:

Սուրբ Պատարագի աւարտին կատարուեցաւ Հոգեհանգստեան Պաշտօն, ապա «Գովեա Երուսաղէմ» շարականի երգեցողութիւնը:

Արարողութեանց աւարտին Եկեղեցւոյ «Թալին Սեհրապեան» Սրահին մէջ տեղի ունեցաւ հոգեսուրճ եւ ընդունելութիւն: Սեղաններուն օրհնութիւնը կատարեց Սրբապան Հայրը: Յաջորդաբար խօսք առին Տէր Հօր թոռնիկը, ընտանեկան պարագաները, իր աշակերտը՝ Տիար Բարսեղ Գարթալեան, խմբագիրներ, բարեկամներ եւ հոգեւորականներ: Լոս Անճելըսի Սուրբ Յակոբ Հայց. Եկեղեցւոյ Ծխական Խորհուրդի Արեւնապետ՝ Բրշ. Տոքթ. Սարգիս Սրկ. Մեսրոպեան, որ Տէր Հօր վերջին գիրքի հրատարակութեան մեկենասը եղած էր, հպարտ պզգաց, որ այդ պատուին արժանացած էր: Հոգշ. Տ. Տաճար Ծ. Վրդ. Եարտըմեան յայտարարեց, թէ Գերշ. Տ. Վաչէ Արք. Յովսէփեան Նիւ Ճըրվի կը գտնուէր եւ իր խորին ցաւակցութիւնները կը յայտնէր Տէր Վարդանի դստեր՝ Սոնիկին եւ բոլոր հարապարներուն:

Առաջնորդ Սրբապան Հայրը անգամ մը եւս յայտնեց, թէ բոլորս փառք պէտք է փանք Աստուծոյ, Տէր Վարդանին պարգեւած երկար կեանքին եւ բազմաթիւ առաքինութիւններուն համար: Ապա մի քանի յուշեր պատմեց Տէր Հօր կեանքէն առնուած:

ԿԱՐԳ ԹԱՂՄԱՆ

Թաղման Կարգը կատարուեցաւ յաջորդ օրը կէսօրէ ետք ժամը 1:00ին Ֆրէյնոյի ՄԱՍԻՍ-ԱՐԱՐԱՍ գերեզմանատան մէջ՝ Սուրբ Պօղոս Հայց. Եկեղեցւոյ Հոգեւոր Հովիւ՝ Արժ. Տ. Արշէն Աւագ Քհնյ. Այվապեանի գլխաւորութեամբ եւ մասնակցութեամբ Տ. Շահէ Աւագ Քհնյ. Ալթունեանի, Տ. Վարդան Աւագ Քհնյ. Գասպարեանի, Տ. Եղիա Աւագ Քհնյ. Հայրապետեանի եւ Սարկաւագներու: Տէր Արշէն իր սրտի խօսքը ուղղեց եւ մխիթարեց Հոգելոյս Տէր Հօր հարապատմելիքը:

Տէր Վարդանի դստեր՝ Տիկին Սոնիկ Քէշիշեանի փափաքին համաձայն, փոխան ծաղկեպսակի նուիրատուութիւնները պիտի կատարուին ի նպաստ Արեւմտեան Թեմի Խնամակալութեան Ծրագրին (Stewardship Program): Նուիրատուներէն կը խնդրուի իրենց չէքերը գրել:

WESTERN DIOCESE-STEWARDSHIP PROGRAM անունով եւ ղրկել Առաջնորդարան հետեւեալ հասցեով.-

WESTERN DIOCESE-ARMENIAN CHURCH
3325 N. GLENOAKS BLVD.
BURBANK, CA 91404

Թող Աստուած իր երկնային լոյսերուն մէջ հանգչեցնէ նուիրեալ սպասաւոր եւ բազմավաստակ գրող՝ Արժ. Տ. Վարդան Աւագ Քհնյ. Տիւկէրեանի հոգին եւ Սուրբ Հոգին մխիթարէ իր դուստրը եւ փեսան՝ Սոնիկը եւ Գէորգը, հարապատմելիքը եւ բոլորը:

«Յիշատակն արդարոց՝ օրհնութեամբ եղիցի»: